Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Պ-174-10.12.2012-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 20-ի ՀՕ-308 օրենքի (այսուհետ՝ օրենք) 14-րդ հոդվածի 1.1-րդ մասը երկրորդ պարբերությունից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ՝ նոր պարբերությամբ.

«Խմբակցությունը համարվում է ոչ ընդդիմադիր, եթե խմբակցություն ստեղծած առանձին կուսակցության կամ կուսակցությունների դաշինքը կազմած կուսակցություններից որեւէ մեկի առաջադրած անձը ընդգրկված է Կառավարության կազմում կամ խմբակցության ղեկավարը կամ քարտուղարը Ազգային ժողովի նիստում հանդես է գալիս Կառավարության կազմում առավել մեծ թվով անդամներ ունեցող կուսակցության հետ քաղաքական կոալիցիա կազմելու եւ ընդդիմադիր չլինելու մասին հայտարարությամբ:»:

Հոդված 2. Օրենքի 24.1-ին հոդվածի 2րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

<Խորհրդարանական այլ խմբակցությունները, որոնք չեն հայտարարել իրենց ընդդիմադիր կամ ոչ ընդդիմադիր լինելու մասին էթիկայի հանձնաժողովում ներկայացնում են մեկական ներկայացուցիչ:>

Հոդված 3. Օրենքի 24.4-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) «զ» կետը շարադրել նոր խմբագրությամբ «հանձնաժողովի որոշումները և եզրակացությունները ընդունվում են հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է հանձաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին» բառերով:

2) «է» կետը «եթե» բառից հետո լրացնել «հանձնաժողովը սույն օրենքի 24.3-րդ հոդվածի 7-րդ կետում սահմանված ժամկետներում չի ավարտում հարցի քննությունը կամ» բառերով,

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացությունը
Դավիթ Հարությունյան Արփինե Հովհաննիսյան	**Նախագծի 1-ին հոդված շարադրել հետևյալ խմբագրությամբ *Հոդված 1.*** «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 20-ի ՀՕ-308 օրենքի (այսուհետ՝ օրենք) 14-րդ հոդվածի 1.1-րդ մասը երկրորդ պարբերությունից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ՝ նոր պարբերությամբ. «Խմբակցությունը համարվում է ոչ ընդդիմադիր, եթե խմբակցություն ստեղծած առանձին կուսակցության կամ կուսակցությունների դաշինքը կազմած կուսակցություններից որեւէ մեկի առաջադրած անձը ընդգրկված է Կառավարության կազմում կամ խմբակցության ղեկավարը կամ քարտուղարը Ազգային ժողովի նիստում հանդես է գալիս Կառավարության կազմում առավել մեծ թվով անդամներ ունեցող կուսակցության հետ քաղաքական կոալիցիա կազմելու եւ ընդդիմադիր չլինելու մասին հայտարարությամբ:»:	Ընդունվել է
Դավիթ Հարությունյան Արփինե Հովհաննիսյան	**Նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ *Հոդված 2.*** Օրենքի 24.1-ին հոդվածի 2րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ. <Խորհրդարանական այլ խմբակցությունները, որոնք չեն հայտարարել իրենց ընդդիմադիր կամ ոչ ընդդիմադիր լինելու մասին էթիկայի հանձնաժողովում ներկայացնում են մեկական ներկայացուցիչ:>	Ընդունվել է

Դավիթ Հարությունյան **Արփինե Հովհաննիսյան**	**Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ <<**1) «զ» կետը շարադրել նոր խմբագրությամբ «հանձնաժողովի որոշումները և եզրակացությունները ընդունվում են հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է հանձաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին և որոշմանը կողմ են քվեարկել ոչ ընդդիմադիր եւ ընդդիմադիր խմբակցությունները ներկայացնող առնվազն մեկական անդամներ» բառերով:**>>**	**Ընդունվել է**